ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՆՔ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

Հարգելի հավատացյալներ, տեղեկացնում ենք, որ դեկտեմբեր ամսին տեղի կունենա **«Մեր եկեղեցին մեր երեխաների համար»** բարեգործական միջոցառումը: Եթե ձեր երեխան երգում, պարում, ոտանավորներ է արտասանում կամ ունի մեկ այլ հետաքրքրություն, հրավիրում ենք մասնակցելու գրանցվելու համար կարող եք դիմել Վարդուհի Ասատրյանին:

Ինչպես նաև այն ծնողները, երիտասարդները, որոնք զբաղվում են ձեռքի աշխատանքներով, պատրաստում են հետաքրքիր ձեռագործներ, կարող են մասնակցել բարեգործական տոնավաճառին՝ այդպիսով ներդրում կատարելով հայկական դպրոցի, երգի և պարի խմբակների զարգացման գործում:

Հրավիրում ենք հայոց լեցվի դպրոց բոլոր ցանկացողներին: Գործում են երեք խմբեր՝ երիտասարդների, 6-7տարեկան և 8-12 տարեկան երեխաների համար: Ցանկացողները կարող են գրանցվել՝ դիմելով Վարդուհի Ասատրյանին:

Ժողովրդապետություն

Խմբագրումը և ձևավորումը՝ Վարդուհի Ասատրյանի
Մեր հասցեն՝ г. Москва, ул. Малая Грузинская д. 19/2
Հեռախոսներ՝
+7 (965) 258 68 41(Վ. Ասատրյան)
+ 7(926) 904 91 49 (Հայր Պետրոս Ծայրագույն Վարդապետ Պետրոսյան)
E-mail - am.armcatholik@mail.ru, anusharts@mail.ru, ppetros@libero.it
http:/armcatholik.ru

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014թ.

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հարցերին պատասխանում է քահանան...

Հարց 1. Արդյո՞ք մեղքն ու անեծքը փոխանցվում են սերնդից սերունդ: Եվ ինչպե՞ս կարելի է ազատվել անեծքից

Պատասխան: Մեղքն ու անեծքը ժառանգաբար չեն փոխանցվում: Օրինակ՝ եթե ծնողը մեղք է գործել, ինքն է պատասխանատու իր մեղքի համար և այս պարագային երեխան անմեղ է ու իր ծնողի փոխարեն պատասխանատու չէ: Ինչ վերաբերում է մեղքի փոխանցմանը, ապա հարկ է նշել, որ եթե ծնողը հարբեցողության, թմրամոլության և այլ մեղքերի մեջ է, ապա երեխան կրում է դրանց՝ այդ մեղքերի հետևանքները միայն, այլ ոչ թե պատասխանատվությունը: Եթե մայրը հղիության ընթացքում ծխում է կամ ոգելից խմիչքներ է օգտագործում, ապա երեխային այդ ամենը անրադառնում է, երեխան մեղավոր չէ, բայց կրում է ծնողի մեղքի հետևանքը, ինչպես մենք կրում ենք Ադամի և Եվայի մեղքի հետևանքը: Անեծքի պարագան այլ է. անեծքը չի կարող փոխանցվել, քանի որ այն իրական չէ, անեծքից ոչ մեկին վատ բան չի լինում, բացի անիծողից: Իսկ եթե ինչ որ բան էլ լինում է, ապա մենք ենք մեր անհաջողությունները կապում այդ անեծքի հետ: Անեծքը սնոտիապաշտական երևույթ է, այն ուժ է առնում մեր նախապաշարումներից, ներշնչանքներից ու վախերից: Հակառակ դեպքում անեծքը զորություն չունի:Անեծքից հնարավոր է ազատվել միայն աղոթքով, հավատքով և օրհնությամբ: Լավագույն միջոցը անեծքից ազատվելու Տնօրհնեքն է, երբ քահանա էք հրավիրում ձեր տունը օրհնելու:

http://holytrinity.am/

1Թեսաղոնիկեցիներ

1 Պողոսը, Սիղուանոսը եւ Տիմոթէոսը՝ թեսաղոնիկեցիներիդ
եկեղեցուն՝ մեր Հայր Աստուծով եւ Տէր Յիսուս Քրիստոսով։ [2]Շնո՛րհ
ձեզ եւ խաղաղութի՛ւն։ Միշտ գոհութիւն ենք յայտնում Աստծուն ձեզ
համար՝ բոլորիդ յիշատակելով մեր աղօթքներում, [3]անդադար
յիշելով ձեր հաւատի գործը, սիրոյ վաստակը եւ յոյսի
համբերութիւնը մեր Տէր Յիսուս Քրիստոսի, Աստծու եւ մեր Հօր
առաջ։ [4]Սիրելի՛ եղբայրներ, գիտցէ՛ք, որ ընտրուել էք Աստծու
կողմից. [5]մեր Աւետարանը միայն խօսքերով չքարոզուեց ձեզ, այլ
նաեւ զօրութեամբ, Սուրբ Հոգով եւ կատարեալ վստահութեամբ.
գիտէք նաեւ, թէ ինչպիսի ընթացք ունեցանք ձեր մէջ ձեզ համար։ [6]Եւ
դուք, նմանուելով մեզ եւ Տիրոջը, ընդունեցիք Խօսքը բազում
նեղութեան մէջ Սուրբ Հոգու ուրախութեամբ՝ [7]օրինակ
հանդիսանալով բոլոր հաւատացեալներին, որոնք Մակեդոնիայում
եւ Աքայիայում են. [8]ձեզնից հնչեց Աստծու խօսքը ոչ միայն
Մակեդոնիայում եւ Աքայիայում, այլեւ առ Աստուած ձեր ունեցած
հաւատը սփռուեց ամէն տեղ, այնպէս որ մեզ պէտք չէ մի որեւէ բան
խօսել այդ մասին, [9]քանի որ մարդիկ իրենք իսկ պատմում են մեր
մասին. թէ ինչպէս եղաւ մեր մուտքը ձեր մէջ, եւ թէ ինչպէս
կուռքերից դարձաք առ Աստուած՝ ծառայելու համար կենդանի եւ
ճշմարիտ Աստծուն [10]եւ սպասելու երկնքից նրա Որդու գալստեան,
որին յարութիւն տուեց նա մեռելներից, Յիսուսին, որ պիտի փրկի
մեզ վերահաս բարկութիւնից:

Ղուկասի Ավետարան 12, 13-31

[13]Ժողովրդի միջից մէկը նրան ասաց. «Վարդապե՛տ, ասա եղբօրս,
որ ժառանգութիւնը ինձ հետ բաժանի»: [14]Եւ նա նրան ասաց. «Ո՛վ
մարդ, ինձ ո՞վ դատաւոր կամ բաժանարար կարգեց ձեր
վրայ»:[15]Ապա ժողովրդին ասաց. «Տեսէք, որ զգոյշ լինէք ամէն
տեսակ ագահութիւնից, որովհետեւ մարդու կեանքը իր կուտակած

հարստութեան մէջ չէ»։ [16]Եւ նրանց մի առակ պատմեց ու ասաց.
«Մի մեծահարուստի արտերը առատ բերք տուեցին. [17]եւ նա խորհեց
իր մտքում ու ասաց. «Տեսնեմ ինչ կարող եմ անել, քանի որ բերքս
կուտակելու տեղ չկայ։ [18]Գիտեմ, - ասաց նա, - թէ ինչ պէտք է անեմ.
կը քանդեմ իմ շտեմարանները եւ աւելի մեծերը կը շինեմ ու այնտեղ
կը հաւաքեմ ցորենը եւ իմ ամբողջ բարիքները. [19]ու ինքս ինձ կ՚ասեմ՝
ո՛վ մարդ, շատ տարիների համար ամբարուած բազում բարիքներ
ունես, հանգի՛ստ արա, կե՛ր, խմի՛ր եւ ուրա՛խ եղիր»։ [20]Աստուած
նրան ասաց. «Անմի՛տ, հէնց այս գիշեր հոգիդ քեզնից պահանջելու
են, իսկ ինչ որ պատրաստել ես, ո՞ւմն է լինելու»։ [21]Նոյնպէս է նաեւ
նա, ով իր անձի համար գանձ կը հաւաքի եւ Աստուծով չի
հարստանայ»։ [22]Եւ իր աշակերտներին ասաց. «Դրա համար էլ
ասում եմ ձեզ. հոգ մի՛ արէք ձեր հոգու համար, թէ ինչ էք ուտելու, ոչ
էլ մարմնի համար, թէ ինչ էք հագնելու, [23]որովհետեւ հոգին առաւել
է, քան կերակուրը, եւ մարմինը՝ քան հագուստը։ [24]Նայեցէ՛ք
ագռաւներին, որոնք ո՛չ սերմանում են եւ ո՛չ հնձում, որոնք ո՛չ
շտեմարաններ ունեն եւ ո՛չ էլ ամբարներ, բայց Աստուած
կերակրում է նրանց. որքա՜ն եւս առաւել ձեզ, որ շատ աւելի յարգի
էք, քան թռչունները։ [25]Ձեզնից ո՞վ, հոգս անելով, կը կարողանայ իր
հասակի վրայ մէկ կանգուն աւելացնել։ [26]Արդ, եթէ փոքր բանի մէջ
անկարող էք, այլ բաների համար ինչո՞ւ էք հոգս անում։ [27]Նայեցէ՛ք
շուշանին՝ ինչպէս է աճում. ո՛չ աշխատում է եւ ո՛չ հիւսում։ Ասում
եմ ձեզ՝ Սողոմոնն իսկ իր ամբողջ փառքի մէջ նրանցից մէկի նման
չհագնուեց։ [28]Իսկ եթէ խոտը, որ այսօր բաց դաշտի մէջ է, իսկ վաղը
հնոց է նետուելու, Աստուած այդպէ՛ս է հագցնում, որչա՜փ եւս
առաւել ձեզ պիտի հագցնի, թերահաւատնե՛ր։ [29]Եւ դուք մի՛
մտահոգուէք, թէ ի՛նչ էք ուտելու կամ ի՛նչ էք խմելու, եւ մի՛
մտատանջուէք, [30]որովհետեւ այդ ամէնը աշխարհի հեթանոսներն
են, որ փնտռում են։ Իսկ ձեր Հայրը գիտէ, որ այդ ամէնը պէտք է
ձեզ։[31]Այլ դուք հետամո՛ւտ եղէք Աստծու արքայութեանը, եւ այդ
ամէնը աւելիով կը տրուի ձեզ»։

Մանկական էջ..

Турки разграбили все наше имущество и сейчас угрожают вырезать нас всех. Наша единственная вина в том, что мы христиане, хуже того—армяне. Если другие христианские народы защищаются единоверными государствами, то армян никто не защищает.

Мы сейчас с надеждой взираем на Россию, которая является единственной сопредельной христианской страной... Сколько раз наша патриархия посылала в Высокую Порту телеграммы, протестуя против угнетения, но они, кроме вреда, ничего не приносили. В. Порта, с одной стороны, дает нам пустые обещания, с другой же— посылает тайные приказы местным властям, не боясь ответственности усилить угнетение и притеснить нас так, чтобы и сил не оставалось для протеста.

Хотя мы и раньше испытывали жестокий гнет и притеснения, но после восстаний в Сербии и Болгарии, а особенно в последнее время, когда есть опасность войны между Россией и Турцией, турки, подобно раненому медведю, с отчаянной яростью набрасываются на армян, причиняют нам всякое зло, говоря: «И вы одной веры с этими гяурами-русскими».

Надеждой нашей являетесь вы, братья русские армяне. Умоляем, окажите нам помощь...

«Мшак», 24 февраля 1877 г., № 13

Նյութը պատրաստեց և ներկայացրեց
Մինաս Մովսեսյանը

Յիսուսի Քրիստոսի Ծառայ

ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.
Ողորմութեամբ Աստուծոյ Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ
Կաթողիկէ Հայոց

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՉ

Մեր Պատուական Եղբայրներուն՝ Արիի. Արիի. Արքեպիսկոպոսներուն, Եպիսկոպոսներուն, Գերապատիւ Վարդապետներուն, Յարգոյ Քահանաներուն, Սարկաւագներուն, Առաքինազարդ Կոյսերուն եւ Հաւատացեալ Ժողովուրդին:

Հայաստանաբնակ եւ աշխարհասփիւռ համայն հայութիւնը կը պատրաստուի 2015-ին բացառիկ միջոցառումներով նշելու Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցը: Շրջադարձային դառնալու կոչուած այս հանգրուանը ամէն բանէ առաջ եւ ամէն բանէ վեր պէտք է հանդիսանայ արտայայտութիւնը մեր միասնականութեան, մեր միասնական ու աւելի կազմակերպուած աշխատանքին՝ որ մեր ազգային առաջնահերթութեանց առաջնահերթն է՝ ըլլալով նախապայմանը մեր համազգային առաջադրանքներուն կենսագործումին:

Մեր ժողովուրդը՝ միջազգային հանրութեան իր այս միասնականութեան վկայութիւնը տալու առիթը պիտի ունենայ իր զանգուածային ներկայութեամբ հայածէս սուրբ Պատարագին զոր Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին առիթով պիտի մատուցանենք Վատիկանի սուրբ Պետրոսի Պազիլիքային մէջ 2015-ի Ապրիլի 12-ին Ֆրանչիսկոս հայասէր Սրբազան Քահանայապետին նախագահութեամբ, Կարդինալներու դասին, Վատիկանի մօտ լիազօրագրուած օտար դեսպաններուն ներկայութեամբ եւ հռոմաբնակ հոգեւորականներու եւ հաւատացեալներու մասնակցութեամբ: Այս պատմական

իրաղարձութեան պիտի արձագանգեն միջազգային լրատուամիջոցները եւ ան իր վրայ պիտի հրաւիրէ միջազգային հանրութեան ուշադրութիւնը եւ պիտի հրահրէ անոր հետաքրքրութիւնը Հայ ժողովուրդին եւ Հայ Դատի մասին։

Վստահ ենք որ ձեր թեմերէն եւ ժողովրդապետական սահմաններէն ներս, լաւագոյն պատշաճութեամբ եւ խանդավառութեամբ պիտի քաջալերէք ձեր հաւատացեալները, բարեկամներն ու շրջապատը մասնակցելու յաւիտենական քաղաքին՝ Հռոմի մէջ տեղի ունենալիք պատմականօրէն յիշարժան այս մեծախորհուրդ արարողութեան, որուն պիտի յաջորդէ բացառիկ համերգ մը, որ պիտի հանդիսանայ ներբող մը Մեծ Եղեռնի Նահատակաց։ Մեր ժողովուրդին մեծաթիւ մասնակցութիւնը միաժամանակ պիտի զօրացնէ Հայոց ցեղասպանութեան զոհերուն իբրեւ հաւատքի նահատակներ սրբադասման մեր առաջադրանքը։

Ինչպէս Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի մեր պատրիարքական յանձնախումբին կողմէ երկար ժամանակէ ի վեր առաջադրուած ծրագիրներուն գլխաւորը հանդիսացող վերոյիշեալ ձեռնարկներուն, նոյնպէս հայկական բոլոր հասարակութիւններէն ներս Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումներուն մեր ժողովուրդին գիտակից ու անվերապահ մասնակցութեամբ՝ վկայութիւնը պիտի տանք մեր հաւատարմութեան մեր մէկուկէս միլիոն նահատակներու հաւատքին եւ Քրիստոսի ու Ազգին հանդէպ անոնց անսասան սիրոյն։ Միաժամանակ պիտի վերահաստատենք մեր կառչումը աստուածայաղթ Արդարութեան, մարդկային անկորնչելի իրաւունքին ու արժէքներուն եւ յատկապէս նահատակութեան վսեմագոյն արժէքին, որմէ ծիլ առաւ եւ կ՚ընձուղուի ահա վերակենդանացումը ու փառապանծ յարութիւնը Հայ Ազգին։

Հայրապետական օրհնութեամբ՝

† Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ
Կաթողիկէ Հայոց
Տուեալ ի Կաթողիկոսական Աթոռոյն որ ի Զմմառ Յաւուր երեքտասաներորդի ամսեանն Նոյեմբերի յամի Տեառն 2014-ի Ի վեշտասաներորդում ամի Հայրապետութեան Մերոյ

Письмо из Вана в газету «Мшак»

Перевод с армянского

Ван, 19(31) декабря 1876 г.

Выдержки

День 1 (13) декабря 1876 года явился черной страницей в летописи Вана. Город, который славился в Армении своим великолепием, за одну ночь разделил судьбу Ани, подвергшись пожарам, грабежу и избиениям. В эту ночь словно воскресли черные дни Тамерлана, будто вышли из могил призраки вандалов в белых саванах, поджигая все вокруг.

Было около двух часов ночи, когда армяне с изумлением увидели, что охранные войска, полицейские, солдаты и чернь, объединившись, с топорами, и факелами в руках разносят армянские лавки и дома, грабят и поджигают их. Некоторые должностные лица, находившиеся на месте происшествия, делая вид, будто они не в силах сдержать ярость погромщиков, выступали лишь в роли Зрителей, а иные даже воодушевляли их. Его преосвященство епископ Еремия и архимандрит Погос, прибежавшие на рынок, чтобы предотвратить пожар, были жестоко избиты в присутствии должностных лиц. Некоторые из солдат даже осмелились поднять на них сабли и грозились разрубить их, если они попытаются спасти от пламени пожара и грабежа лавки армян.

Армяне, хотя и невооруженные, неподготовленные и ошеломленные происходящим, глядя в лицо смерти, пытались спасти свои дома и имущество; войска же били их штыками и прикладами. Сколько раненых и потерявших разум, сколько убитых было среди них! Некоторым армянам удалось спасти кое-что, но большинство было ограблено до последней нитки. Что будет с нами? Если армяне из России не подоспеют на помощь, нас ожидает смерть...